ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. ԿՈԹՈՂՅԱՆ

ՄԵՂՎԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

638.15
Կ-63

Ա. Մ. ԿՈՐԻՆՅԱՆ

ՄԵՂՎԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Ա 19295

ՀԱՅԿՈՍՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1949

А. КОТОГЯН

БОЛЕЗНИ ПЧЕЛ И МЕРОПРИЯТИЯ БОРЬБЫ С НИМИ

(На армянском языке)

Ереван, Армгиз, 1949 г.

ՄԵՂՎԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեղվաբուծական տնտեսություններում խոշոր չարիք են պատճառում մեղվի հիվանդությունները, որի հետևանքով լինում են խոշոր կորուստներ։ Անասնաբուժական դիտությունների դոկտոր Վ. Ի. Պոլտևը հաշվել է, որ Միության մասշտաբով մեղվի հիվանդությունները տարեկան կորուստ են տալիս մոտավորապես՝

ա) մեղր 220,5 տոննա.

բ) մոմ 10,5 » .

գ) մեղվի ընտանիքներ 220.000 հատ։

Վերևում բերված թվերից երևում է, որ կորուստը չափազանց մեծ է։ Մեղվի հիվանդություններից այս կամ այն տեսակը, այս կամ այն չափով տարածված են ամբողջ Միության մեջ, մի տեղում շատ, մյուս տեղում քիչ. օրինակ՝ Հեռավոր Արևելքում մեղվի փտախտ հիվանդությունը բոլորովին չկա։

Հայաստանը նույնպես զերծ չէ այդ չարիքից. մեր տարբեր շրջանների մեղվանոցներում հիվանդության գրեթե բոլոր հիմնական տեսակները կան։ Հիվանդություններն ավելի շատ ավելի են գործում հատկապես այս վերջին տարիներում։

Հիվանդությունների այսպիսի լայն տարածումը և նրա հետևյալ հակալական վնասները ստիպում են մեզ՝ մեղվապահներիս, ուսումնասիրել ոչ միայն հիվանդությունների առաջացման և տարածման պատճառները, այլև որոշել նրանց նշանները և նրանց դեմ պայքարելու ձևերը։

Ընդհանրապես ավելի հեշտ է նախազգուշանալ, կանխել հիվանդությունները ու նրանց տարածումը, քան թե հիվանդ ընտանիքներին բուժելը։

Հատուկացած մեղուներն ու նրանց թրթուրները կարող են հիվանդանալ իրենց բոլոր հասակում, մեղուների հիվանդությունները լինում են վարակիչ և ոչ վարակիչ։ Վարակիչ հիվանդությունները

ների ժամանակ մի մեղվից հիվանդությունն անցնում է մյուս մեղվին, մեկ թրթուրից մյուս թրթուրին և մեկ ընտանիքից մյուս ընտանիքին։ Վարակիչ հիվանդություններն առաջացնում են միկրոբներ կամ բակտերիաներ և հատուկ պարազիտներ, որոնք անտեսանելի են հասարակ աչքին, նրանց հնարավոր է տեսնել միայն խոշորացույցների և մանրադիտակների (միկրոսկոպների) օգնությամբ։ Վարակիչ հիվանդությամբ վարակված ընտանիքները մեծ քանակությամբ մեղուներ են կորցնում, իսկ փտախտով վարակված լինելու դեպքում ոչնչանում են նրանց թրթուրները, հարսնյակները, որի պատճառով այդ ընտանիքները չափից ավելի թուլանում են և եթե ժամանակին միջոցներ ձեռք չառնվեն, ամբողջ ընտանիքներ կհանդեն։

ՀԱՍՈՒՆԱՑԱԾ ՄԵՂՎԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՄԵՂՎԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասունացած մեղվի հիվանդության հետ գործ ունենալուց պետք է հիշել, որ սկզբնական շրջանում նրա հայտնաբերումն այնքան էլ դյուրին չէ, ինչպես փտախտի, այսինքն թրթուրների հիվանդությունն իր առաջին շրջանում հայտնաբերելը։

Մեղվապահը հասունացած մեղվի հիվանդությունները նկատում է միայն այն ժամանակ, երբ հիվանդ ընտանիքները թուլացել, այսինքն կորցրել են արդեն մեծ քանակությամբ մեղուներ, և դառնում են անկման ճանապարհին։ Հիվանդ ընտանիքներն այնքան են թուլանում, որ անմիջապես աչքի են ընկնում, օրինակ՝ եթե ընտանիքը մի քանի օր առաջ պատում էր 10 շրջանակ, իսկ վերջին ստուգման ժամանակ, նա փոխանակ ավելացնելու, պատում է 3—4 շրջանակ։ Դրա համար անհրաժեշտ է հիվանդության առաջին արտաքին նշաններից հետո հետևել նրան, բայց պետք է հաշվի առնել մի հանգամանք, այն է հիվանդության արտաքին նշաններից դժվար է բնորոշել հիվանդության տեսակը, դրա համար էլ անհրաժեշտ է անպայման ճիշտ դիագնոզը դնել միմիայն մանրադիտակի միկրոսկոպի օգնությամբ, այսինքն լաբորատոր քննությունից հետո։

ԱԿԱՐՈՍ ԿԱՄ ՄԵՂՎԻ ՏՈՒԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հիվանդությունը սուր-վարակիչ հիվանդություն է հասունացած մեղունների համար, առաջին անգամ 1904 թ. հայտնվել է Անգլիայի մի փոքրիկ կղզում (Ուայտ), որտեղ մասնայակոն կերպով ուշնաշարել է մեղվի ընտանիքները։

Այս հիվանդության պատճառների հարցը հայտնվեց միայն 1920 թ. Ռեռ-ի կողմից։

Պարզվեց, որ այս հիվանդությունն առաջ են բերում փոքրիկ միկրոսկոպիկ տզեր, որոնք մեղվի շնչառության անցքերի, տրախեյանների պարազիտներն են, այս տզերը կոչվում են ակար, տպիս, կամ մեղվի տզեր, որոնք ունեն 0,2 մմ մեծություն։



Նկ. 1.
Ակարոզային տիզ (խիստ մեծացրած)
Ա) էգ, Բ) արուն։

Այս հիվանդությունը, ինչպես նաև մյուս հասունացած մեղվի վարակիչ հիվանդությունները, հայտնվում են գարնանը. այն ընտանիքները, որոնք շատ վարակված են, մեղունների մի մասը կըհանդի ձմռանը, իսկ մյուս մասը, ձմեռանոցից դուրս գնելուց հետո։ Թույլ վարակված մեղունները կարող են ամբողջությամբ չհանդել կամ աննկատելի քանակությամբ մեղուներ կորցնել։

Այս հիվանդությունը կարող է շատ ուժեղ ներգործել, երբ կատարվի կլիմայական ուժեղ փոփոխություն, ցրտերից հետո տաք եղանակներ, կամ բուրից հետո ցուրտ, նամանավանդ անբարենպաստ տարիներում։

Հիվանդության նշանները *կայանում են նրանում, որ սնհատ մեղունները թուլանալով կորցնում են իրենց թռչելու ընդունակությունը, թռչելու դեպքում ընկնում են գետնին և սկսում են սողալ արկանոցի մոտ. նրանց թևերի վրա նկատվում է փոփոխություն, դա բացատրվում է նրանով, որ տրախեյանները կորցնելով իրենց ուռանձնահատկությունը հնարավորություն չեն տալիս թևերին աշխատելու։*

Վարակված մեղունների թռչելուց դուրս է գալիս կոշտ ձայն, ինչպես բոռի ձայնն է։

Ակարոզ հիվանդության տարածումը.— Այս հիվանդությունը տարածվում է հիվանդի և առողջի անմիջական շփման միջոցով. էպիտիզը միայնակ սողում է առողջ մեղվի վրա և այնտեղից մտնում շնչառության անցքը:

Ապացուցված է, որ մեղվի տիզը չի լինում ո՛չ մեղրահացերի, ո՛չ փեթակի մասերին և ո՛չ էլ (որդ ու ձվերի) ձվերի, թրթուրների և հարսնյակների վրա, նույնիսկ ուժեղ վարակված ընտանիքներում: Այնուամենայնիվ պետք է զգույշ լինել հիվանդ ընտանիքի դույքը օգտագործելու ժամանակ, պետք է ծծմրի ծուխ տալ, որից հետո տալ առողջ ընտանիքներին:

Այս հիվանդությամբ կարող են վարակվել ինչպես աշխատավոր, այնպես էլ բուռ և մայր մեղուները: Մեղուները վարակվում են տզերով միայն ջահել ժամանակ, ամենից շատ նոր ծնված մեղուները՝ 87%-ով, մի օրեկան մեղուները՝ 73%-ով, երկու օրեկան մեղուները՝ 54%-ով, երեք օրեկանները՝ 40%-ով, չորս օրեկանները՝ 16%-ով, հինգից ինն օրեկանները՝ 2—3%-ով, 12 օրեկանից բարձր մեղուները բոլորովին չեն վարակվում: Եթե տիզը վարակում է մեծահասակ մեղվին, ապա տիզը մտնում է շնչառության անցքերից ներսում, չկարողանալով կպչել տրախեյանների պատերին, նորից դուրս է գալիս:

Ակարոզ հիվանդության բուժումը.— Այս հիվանդությունը միակն է, որի բուժման համար օգտագործվում են դեղորայք: Մինչև բուժման անցնելը պետք է կատարել հետևյալ միջոցառումները ճիշտ ախտորոշելու (դիագնոզ) համար:

Յուրաքանչյուր ընտանիքից պետք է վերցնել 30—50 կենդանի կամ նոր մեռած մեղու և այդ ընտանիքից վերցրած նմուշը պետք է դնել թղթե ծրարի կամ լուցկու տուփի մեջ, որոնց վրա նշանակել մեղվանոցի հասցեն, ընտանիքի համարը և նմուշ վերցնելու ժամանակը: Հավաքած նմուշները պետք է դնել տախտակյա կամ թիթեղյա արկղի մեջ, ամուր փակել կափարիչով (վարակը չտարածելու նպատակով) և շտապ կերպով ուղարկել ամենամոտիկ դիագնոստիկ լաբորատորիան: Արկղի վրա պետք է պարզորոշ գրել լաբորատորիայի և ուղարկողի հասցեն: Առանձին ուղարկվող նամակում պետք է գրել մեղվանոցի տեղը, կամ մեղվաբույծը պետք է մանրամասնորեն նկարագրի հիվանդ լինելու մեջ կասկածվող մեղվի ընտանիքների արտաքին նշանները, նրանց քանակը և իր հասցեն:

ՄԵԿՈՒՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ՖՐՈՈՒԻ ՀԵՂՈՒԿՈՎ

Ֆրոուի հեղուկով մեկուներին բուժումը կատարում է նրանում, որ փեթակի մեջ մտցրած Ֆրոուի հեղուկի թունավոր գոլորշիները մահում են մեղվի շնչառության գործարանները և այնտեղ սպանում են մակաբուծող (պարազիտ) տզին, դպալի վնաս չհասցնելով մեղվին։

Ֆրոուի խառնուրդի պատրաստելու եղանակը՝

1. Վերցնում են 2 մաս նիտրոբենզոլ.
2. » » 2 » մաքուր բենզին (բենզոլ).
3. » » 1 » սաֆրոլի (ասպարակի) ձեթ։

Այդ երեք նյութերի խառնուրդը տալիս է սուր հոտ ունեցող մի հեղուկ, որը հրապուրում է մեղուներին և նպաստում է զարգացմանը մեղվանոցում։ Ֆրոուի խառնուրդը թունավոր է, վնասակար մարդու շնչառության ուղիների համար և հեշտությամբ բացավառվում է, այդ պատճառով խառնուրդի հետ շատ զգույշ պետք է լինել։ Ֆրոուի խառնուրդը պետք է պահել հով տեղ, հղկված և պարաֆինած խցաններով, դատարկ սրվակներում և սրվակի վրա մակագրել «Թույն»։

Նկատի ունենալով, որ նիտրոբենզոլն ու բենզինն արագ գոլորշիանում են, նպատակահարմար է խառնուրդը պատրաստել գործածելուց անմիջապես առաջ՝ անհրաժեշտ եղանակով խառնուրդը պատրաստելիս բենզինն ավելացնել վերջում։

ԳԱՂԱՆ ԲԼԱՏԻ ՓԵԹԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖՐՈՈՒԻ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԴՈԶԱՆԵՐԸ

Ֆրոուի հեղուկով մեկուներին ակարողից բուժելու համար գործ են ածվում միատեսակ դրական հետևանքներ տվող տարբեր դոզաներ։

Փեթակի մեջ կարելի է մտցնել հեղուկ՝

ա) երկու անգամ 5-ական խոր. սմ, 2 օր ընդմիջումով,

բ) երեք օրվա ընթացքում օրեկան 3 խոր. սմ,

գ) յոթ օրվա ընթացքում օրեկան 1,8 խոր. սմ,

դ) հինգ օրվա ընթացքում ախտավորված ընտանիքին օրը մեջ տալ 30-ական կաթիլ կամ թե 6 օրվա ընթացքում օրեկան 20-ական կաթիլ։ Իսկ լանգստրոտի փեթակներում ապրող ընտա-

նիքների համար վերը նշված դղաները քիչ պետք է փոփոխել։ Օրեկան պետք է տալ 2,5 խոր. սմ, ընդամենը 9 խոր. սմ-ի փոխարեն տալ 7,5 խոր. սմ։

Փեթակն ու շրջանակները և փեթակում գտնված բոլոր առարկաները, պետք է 5—7 օրով առանձնացնել մեղուների համար անմատչելի տեղ, որից հետո միայն կարելի է նրանց օգտագործել մեղվաբուծական տնտեսության մեջ։ Ֆրոուի հեղուկով բուժումը կարող են կատարել միայն հատուկ որակավորված աշխատավորներ։

ԲՈՒԺՈՒՄԸ ՄԵԹԻԼՍԱԼԻՑԻԼԱՏՈՎ

Վինտերդինի մեթիլսալիցիլատի սինթետիկ ձեթն անգույն, կամ բաց դեղնագույն հեղուկ է, ուժեղ, յուրահատուկ հոտով։ Մեթիլսալիցիլատը սպանում է մեղուների շնչափողերում գտնված բոլոր տիզերին։ Նրա փոքր դոզաներն ավելի պակաս թունավոր են, քան թե Ֆրոուի հեղուկը. բոցավառվող չեն, մեղուների և թրթուրների վրա ակնհայտ վնասակար ազդեցություն չունեն և մեղուների մեջ գողություն չեն առաջացնում։

Նախքան բուժումը պետք է կատարել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

ա) պարզել ընտանիքի ուժը (շրջանակների քանակը, թե քանի շրջանակ է պատում մեղուն, ձվերով, թրթուրներով և հարսնյակներով, մեղրահացերի քանակը, մեղրի պաշարը և այլն) և փեթակի առջևի պատի վրա նշանակել ընտանիքի ուժի համեմատ դեղանյութի դոզան.

բ) ստուգել կերի պաշարը և քանակը հասցնել առնվազն 4 կգ.

գ) փեթակում եղած բոլոր ճեղքերը ծեփել (ծեփանով, կավով և այլն).

դ) պատրաստել յուրաքանչյուր ընտանիքի համար 15—20 սմ երկարությամբ, 7 սմ լայնությամբ և 7 մմ բարձրությամբ մետաղացանցից փանդակ, որի մեջ լցնել բամբակ, որպեսզի բամբակի վրա լցված դեղանյութը մետաղացանցով մեղուներից անջատվի.

ե) ճշտորեն չափված դեղանյութը պետք է լցնել «դ» կետում նշված պատրույգի կամ բամբակաշերտի վրա և խնկուլն արկանոցի անցքով մտցնել փեթակը։

Մեթիլամիլիլամը պետք է տալ երեք շաբաթվա ընթացքում երկու օրը մեկ անգամ, երեկոները, երբ մեղուների թռիչքը դադարել է։ Դոզաները հետևյալներն են՝ թույլ ընտանիքների համար (4—6 շրջանակ պատող մեղու) ամեն անգամ 6 խոր. սմ, միջակ ընտանիքներին (7—9 շրջանակ պատող) 7,5 խոր. սմ, ուժեղ ընտանիքներին՝ (10—12 շրջանակ պատող) 8,5 խոր. սմ. կորպուսներով (վերնահարկերով) ընտանիքներին 10 խոր. սմ։

Բժշկության ընթացքում մեղվի ընտանիքը 10 անգամ ստանում է նրա համար սահմանված դոզան, որը կազմում է 60—100 խոր. սմ դեղանյութ։

ՄԵՂՎԻ ՆՈՍԵՄԱՏՈՍ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Նոզեմատոզը.— Սա հասունացած մեղվի վերին աստիճանի վարակիչ հիվանդություն է, որն առաջացնում է նոզեմա պարազիտը, որի հետևանքով թուլացնում է ընտանիքները և երբեմն ոչնչացնում ամբողջ մեղվանոցներ։ Սովորաբար այս հիվանդությամբ մեղուները հիվանդանում են գարնանը։

Նոզեմա հիվանդությունը տարածված է Հայաստանի մի շարք շրջաններում (որի մասին մինչև օրս ճշգրիտ տվյալներ չկան), տարածված է նաև Միությունն մեջ զանազան երկրամասերում և Եվրոպայում։

Նոզեմայով հիվանդ ընտանիքները աստիճանաբար կորցնելով աշխատավոր մեղուներին, այնքան են թուլանում, որ շատ հաճախ նրանցից ոչ միայն բերք չի ստացվում, այլև պետք է նրանց կերակրել որպեսզի ձմռանը ապրեն։ Այսպիսի մեղվի ընտանիքին մեղվապահն ուժեղ ընտանիքներից օգնություն տալով, ուժեղացնում է, շատ հաճախ տեսնելով, որ այդ էլ չի օգնում, լուծարքի է ենթարկում ամբողջ ընտանիքը։

Նոզեմա հիվանդությունը որոշ ընտանիքներում սկսում է գարգանալ ձմեռանոցային շրջանի երկրորդ կեսին, հատկապես տրաք չափով վարակը տարածվում է ընտանիքներում, երբ ձմեռող մեղուն առաջին անգամ սկսում է մաքրել իր վերջնաղիքում կուտակված կղկղանքը. փեթակում այս հիվանդության մաքսիմալ զարգացումը գնում է գարնան առաջին երկու ամիսներին, որից հետո սկսում է ուժեղ անկում։

Այս հիվանդության նշաններն ուսումնասիրելիս պետք է ու-

չապրություն դարձնել ոչ միայն առանձին-առանձին մեղվի, այլև ամբողջ ընտանիքի սիստանշանների վրա։ Նոզեմայով տառապող մեղուների մեջ նկատվում է օրգանիզմի ընդհանուր թուլություն, սրանք դառնում են թռիչքի անընդունակ, չկարողանալով ոտքերով տմոր կալել ջնջերին, ընկնում են հատակին, թևերը դողդողում են (թունավորումից), որովայնը ուռած, տոգած (փսրակապություն և այլն), բայց այսպիսի նշաններ լինում են նաև ուրիշ հիվանդության դեպքում, երբ մեղուները նստած վիճակում վերջնալիքը դատարկում և արտաթորում են փեթակի մեջ մեղրահացերի վրա։

Նոզեմայով հիվանդացած մեղուների որովայնը լինում է ուռած, նրանց վերջնալիքը լցված է լինում պինդ և երբեմն ջրալի կոմինասպիտակավուն արտաթորանքով, եթե այդպիսի մեղվի որովայնը սեղմենք ջրալի կղկղանքը դուրս կցայտի մի քանի սանտիմետր հեռավորության վրա, որի հոտը լինում է թթու, իսկ չորացած վիճակում՝ նման է քիմախոտի (բռնոմի) հոտին։

Նոզեմայով հիվանդ մեղվի ընտանիքի արկանոցի առաջ. կեռնի վրա, նկատվում են մեծ քանակությամբ թափված կենդանի մեղուներ, որոնք թևերը թափահարելով սողում են մեղվանոցում. նրանք չեն կարողանում թռչել, խմբերով հավաքվում են փեթակի մոտ քարերի, խոտերի վրա, մեռած մեղուներ նկատվում են փեթակի արկանոցի տախտակի վրա կամ մոտը, մեջքի վրա պառկած՝ ոտները դեպի վերև։

Գարնան ընթացքում հիվանդության ամենատիպիկ նշանը հանդիսանում է հիվանդ ընտանիքների հատուցացած մեղվի խոշոր դուրստար, ընտանիքների աճեցողության ուժեղանալու փոխարեն նկատվում է նվազում և թուլացում, երբեմն նույնիսկ ընտանիքը անգամ է, դրա համար էլ մեղվի ընտանիքը պետք է պահել ուժեղ, որպեսզի հիվանդության դեպքում շատ նկատվի ընտանիքի թուլացումը։ Այս հիվանդության հարուցիչը հանդիսանում է միջքջիջային պարազիտը, որը մեղվի կերամարսողության օրգանի հիվանդություն է։ Նոզեմա հիվանդությունը հայտնաբերվել է 1909 թ.։ Նոզեմայի հարուցիչները վերին աստիճանի վարակիչ են. բնկնելով մեղվի սամոքսը նրանք վարակում են բոլոր հասակի, բոլոր տեսակի մեղուներին և վարակումը կարող է տեղի ունենալ տարվա բոլոր եղանակներին։

Այս հիվանդությունը մեղվանոցում կարող է տարածվել մեղ-

վարակի անվերացման, մասնակի սանացիայի չափազանցման հեռանքով կամ մեղուների և բուների միջոցով, երբ հիվանդ ընտանիքի վարակված մեղուն կամ բուը մտնում են առողջ փեթակները։

Այս հիվանդությունն կանխման համար խոշոր նշանակություն ունեն պրոֆիլակտիկ միջոցառումները, դրա համար բոլոր մեղվանոցներում պետք է կատարել հետևյալ միջոցառումները։

Նոզեմայից վարակված (անապահով) մեղվանոցները հայտնաբերելու համար անց են կացվում մեղվանոցների և մեղվարանոցների քննություն։

Քննության համար մեղուների յուրաքանչյուր ընտանիքից ուղարկում են լաբորատորիա 50 մեռած (հանված) մեղու։ Նոզեմատոզի տեսակությունն տարբերելու համար մեղուների նմուշները քննության պետք է ուղարկել մեղվի ընտանիքները գարնանը ձմեռանոցից դուրս գնելուց անմիջապես հետո։

Նոզեմատոզից կորուստ ունեցած մեղուների ընտանիքները ձմեռանոցից դուրս հանելուց մի քանի օր հետո, տեղափոխել (թափ տալ) մաքուր և վարակազերծված փեթակների մեջ և տալ նրանց մաքուր, աշնանից ախտահանված մեղրահացեր, փեթակում մնացած ձվով, թրթուրներով և հարսնյակներով շրջանակների ձողիկները խնամքով քերել տաք ածխի մեջ և սրբել ֆորմալինի 10 տոկոսանոց լուծույթում թրջած շորով, որից հետո ֆորմալինի հոտը հեռացնելու համար շրջանակների ձողիկները մաքրել նաշատիրի 1 տոկոսային լուծույթում թրջած ուրիշ շորով։

Նայած ձվերի, թրթուրների և հարսնյակների դուրս գալու ընթացքին, այդ մեղրահացերն անհրաժեշտ է տեղափոխել ընթ եղրին, իսկ դրանցից ազատվելուց հետո անպայման մեղրահացերը փեթակից հեռացնել և ենթարկել ախտահանման։

Ամառվա ընթացքում նոզեմատոզային մեղվանոցների բոլոր ընտանիքներում կատարվում է բների լրիվ փոփոխում, կամ մեղուներին թափ է տրվում գլխավոր բերքից առաջ։

Այն շրջաններում, որտեղ նոզեմատոզ է սահմանված և դա կազմում է մեղվանոցների 50%-ից ավելին, առողջացնող միջոցառումներն անց են կացվում բոլոր մեղվանոցներում։

Մեղուների նոզեմատոզային ընտանիքների մայրերն ամեն տարի պետք է փոխարինվեն երիտասարդ և զուգավորված (բեղմնավորված) մայրերով։

Բներից ազատված, փորլուծից կեղտոտված. հնացած, գորտածուության համար անպետք ամբողջ մեղրահացերը ենթարկվում են հալման։ Նոզեմատոզային պիտանի մեղրահացերը մաքրվում և ախտահանվում են ֆորմալինի 4%-ային լուծույթում, 3—4 ժամվա ընթացքում 20—25°-ից ոչ պակաս ջերմությամբ ամուր ծածկված տաշտակի կամ ուրիշ ամանի մեջ։ Ֆորմալինով ախտահանելուց հետո մեղրահացերը խնամքով լվացվում են նաշադիրի սպիրտի թույլ լուծույթում, մեղրաքամ մեքենայով քամվում և օդափոխվում է մեղուների համար անմատչելի տեղ, մինչև հոտի խստում վերանալը (1—3 օր)։

Նոզեմատոզային ընտանիքներից մեղրը քամելուց հետո մեղրահացերի ախտահանումը կատարվում է ֆորմալինի 1%-ային լուծույթով։

Ֆորմալինի 4%-ային լուծույթը սրսկելու միջոցով մեղրահացը ախտահանելիս, աշխատանքը կատարվում է հակագազով։ Ձեռքերը փչանալուց զերծ պահելու համար, դործ են ածվում ռետինե ձեռնոցներ, կամ ձեռքերին քսում են վազելին։

Այն տեղերում, որտեղ մինչև գլխավոր մեղրաբերքը չի կատարվել բների փոփոխումը կամ թափ տալը, գլխավոր բերքահավաքի ավարտվելուց հետո, գարնանից հիվանդ բոլոր ընտանիքներին պետք է տեղափոխել մաքուր, վարակազերծված մեղրահացերով փեթակների մեջ ու նրանց ծածկել մաքուր ծածկոցներով և աշնանը կերակրել շաքարաջրով։ Բույնը խտացնել մեղվի ընտանիքի մեծության չափով և տալ տաքացումներ։

Մեղվանոցը համարվում է առողջ և սահմանափակումները նրա վրայից վերցվում են, եթե հետևյալ դարնան սեղմին անցկացրած մեղուների նմուշների և գարնանը զուրս հանելուց հետո, կենդանի մեղուների լաբորատոր քննությունը ավել է բացասական արդյունք։

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԵՂՎԻ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երիտասարդ մեղուներն իրենց կերակրող հասակում, (2—13 օրեկան, հաճախ 6—11 օրեկան) փեթակից դուրս են գալիս և թափառում նրա շուրջը։ Այս հիվանդությունը սովորաբար նկատվում է մայիս ամսին, մի անգամից յուրա եղանակներից հետո.

այս հիվանդությունը կարող է լինել նաև աշնանը։ Այս հիվանդությունը վարակիչ չէ և լավ եղանակներին անցնում է։

Ամենից ցայտուն և տիպիկ օրինակը, որով հիվանդությունը կարելի է տարբերել մյուս սողացող մեղուներից, դա հիվանդ մեղվի վերջնաղիքի դրությունն է, նա սովորաբար լցված է լինում շոր ծաղկափոշով այնքան, որ քիչ է մնում պայթի, չնայելով, որ մի շարք մեղուների կղկղանքը կարող է լինել՝ ջրիկ։

Հիվանդության պատճառները.— Վերջնաղիքի ծաղկափոշով լցվելը նրանից է, որ խնամող մեղուներն ուտում են մեծ քանակությամբ ծաղկափոշի, որպեսզի ուժեղացնեն կերակրող գեղձերի գործունեությունը։ Դա վերագրում են ծաղկափոշու ազդեցությանը, երբ նա փչացել է ցրտից կամ խոնավությունից։

Բորբոսից թունավորված մեղուների նշանները (փեթակներին տրվում է բորբոսնած մեղրահացի մաքրելու համար) հիշեցնում է մայիսյան հիվանդություն։ Խնամող մեղուները փորձում են մեղրի և ջրի պահանջը բավարարել մեծ քանակությամբ ծաղկափոշի ուտելով, որի հետևանքով շատ շոր կեր ուտելուց առաջանում է փորկապ հիվանդությունը։

Պայքարի միջոցները.— Հանդիպելով մայիսյան հիվանդության ծանր աստիճանին, անհրաժեշտ է մեղուներին կերակրել տաք ջրալի շաքարաջրով (1 կգ շաքար, 1 կգ ջուր), որով կդադարի նրանց հիվանդությունը։ Խորհուրդ է տրվում, որպես նախազգուշական միջոց, մեղվանոցում ունենալ լավ ջրամաններ, որոնք լցված լինեն դաղջ (գոլ) ջրով կամ ջրամանները . ապահովված լինեն քամուց։ Պետք է խուսափել գարնանը մեղվի ընտանիքներում բորբոսնած չեչեր պահելուց կամ օգտագործելուց։

ՄԵՂՎԻ ԹՐԹՈՒՐԻ (ՈՐԴԻ) ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեղվի թրթուրների (որդերի) հիվանդությունները հիմնականում բաժանվում են երկու խմբի՝ բաց թրթուրների (որդի) փտախտ կամ եվրոպական փտախտ և հարսնյակների (փակ որդի) փտախտ կամ ամերիկյան փտախտ։ Այս հիվանդությունները տարածված են ամբողջ աշխարհում, որտեղ որ կան մեղրատու մեղուներ, բացառությամբ Հեռավոր Արևելքից, այս հիվանդությամբ մեղվի ընտանիքները վարակվում են տարվա դարնան երկրորդ կեսերից և ամռան ամիսներին, երբ ընտանիքներում կա մեծ քանակությամբ

(թրթուր) որդ։ Այս վարակիչ հիվանդությունները ձվերի վրա չեն ներգործում, որովհետև ձվի պատյանը համեմատաբար ավելի ամուր է, իսկ երկրորդն էլ ձվային շրջանը կարճ է. ընդամենը 3 օր։

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՓՏԱԽՏ ԿԱՄ ՀԱՐՈՒՆՅԱԿՆԵՐԻ (ՓՍԿ ՈՐԴԻ) ՓՏԱԽՏԸ

Ամերիկյան փտախտը մեղ մոտ կոչվում է նաև փսկ որդի փտախտ, այս հիվանդությունը սուր վարակիչ է, որով հիվանդանում են մեղվի թրթուրները (որդերը)։ Ամերիկյան փտախտն ամենից շատ վնաս է հասցնում մեղվի ընտանիքներին ամռան ամիսներին, նրանց շատ թուլացնում է և եթե մարդկանց կողմից օգնություն չտանա, հիվանդ ընտանիքն ամբողջությամբ կոչնչանա։

Այս հիվանդությունն առաջանում է շատ դիմացկուն սպոր առաջացնող միկրոբ, որը կոչվում է լարվեյի բացիլ (bacillus lar-



Նկ. 2.
Լարվեյի բացիլ.
Ամերիկյան փտախտի բացիլները։

vea), որն իրենից ներկայացնում է կլոր ծայրերով ձողիկներ, որոնք անբարենպաստ պայմաններում պատենավորվում են և դառնում սպոր։

Ամերիկյան փտախտի սպորը կարող է դիմանալ տասնյակ տարիներ։ Այս սպորները 100° եռացրած ջրի մեջ կախած կդիմանան 11 րոպե, անընդհատ եռացող մեղրի մեջ կախված կոչնչանան 1—2 ժամում։ Արևի ուղիղ ճառագայթները չար սպորին կոչնչացնեն 28—41 ժամվա ընթացքում, իսկ մեղրի մեջ արևի ուղիղ ճառագայթների տակ սպորը կդիմանա 4—6 շաբաթ։

Ամերիկյան փտախտի ախտանշանները.— Առաջին նշանները երևում են այն ժամանակ, երբ սերեկած բջիջների մեջ թրթուրները կամ հարսնյակները սրդեն մեռել են և սկսել քայքայվել, մեռած հարսնյակների սերեկների գույնն սկսում է փոխվել և աստիճանաբար փոս ընկնել ու ծածկվել. մեռած հարսնյակների սերեկները մեղուներն սկսում են քանդել, վարակված թրթուրը (որդը) բջիջների մեջ սկսում է զարշ գույն ստանալ և կորցնել իր բը-



Նկ. 3.

Ամերիկյան փտախտով մեռած թրթուրների տեսքը բջիջների մեջ։

նական կապտասպիտակ, գույնն ու կլոր ձևը։ Թրթուրն (որդն) աստիճանաբար նեխելով, փտելով ստանում է ավելի մուգ դորշագույն կամ սրճագույն տեսք և կպչում է ցածի պատին։

Երկրորդ ամենացայտուն ախտանշանն այն է, որ եթե այդ մեռած թրթուրների (որդերի) փտած, նեխած զանգվածին մոտեցնենք մի լուցկու կամ մի փայտի ձող և խառնելով բարձրացնենք դեպի վեր, այդ զանգվածը կպչելով լուցկու ձողին մի քանի սանտիմետր կծորա, կձգվի դեպի վեր։



Նկ. 1.

Երրորդ ախտանշանը ամերիկյան փտախտով մեռած թրթուրի հատուկ հոտն է, որը նմանվում է հյուսնի հալած սոսինձի (կպչի) հոտին. դրա համար էլ այս հիվանդությունը կոչվում է նաև դարշահոտ փտախտ։ Մեռած թրթուրը (որդն) աստիճանաբար չորանալով կորցնում է իր մածուցիկությունը ու հոտը և վերածվելով թեփուկի, կպչում է բջջի ցածի կողքի պատին ամբողջ երկարությամբ։ Վերջինս շատ ամուր կպչում է բջջի պատերին, իսկ մեղուները չեն կարողանում այդ մաքրել, առհասարակ մեռած թրթուրը, նեխած-փտած վիճակում, նույնպես կպչում է բջիջների ցածի պատին ամբողջ երկարությամբ և ունի մածուցիկ, կպչող հատկություն, որի հետևանքով մեղուները չեն կարող մաքրել բջիջներից։

Չորրորդ աշխատանքն այն է, որ մեղրահացի վրա ձվի թրթուրի և հարսնյակի (որդի ու ձվի) դասավորությունն անկանոն է լինում։

Մեռած հարանցակի լեզուն սառած կպած է լինում բջիջի վերի կողքին և նույնությամբ էլ մնում է նույնիսկ նրա թեփուկը վերացվելուց հետո։ Սովորաբար ամերիկյան փտախտով վարակվում են նաև մայրացու և բռնացու իրիուրները (սրդերը)։ Վարակման



Նկ. 5.
Ամերիկյան փտախտով վարակված սրդերի ընդհանուր տեսքը (տեսանելի են բջիջների ծակծկված կափարիչները)։

սկզբնական շրջանում, նույնիսկ վարժ մեղվապահը չի նկատում հիվանդ բջիջները, հետագայում երբ մեղուները մեռած իրիուրների (սրդերի) հարանցակի սերեկները լաց են անում, այդ ժամանակ անմիջապես աչքի են ընկնում բջիջում մեռած իրիուրները (սրդերը), հարանցակները։ Ամերիկյան փտախտով վարակված ընտանիքն այլևս չի առողջանա, որովհետև մեռած իրիուրները (սրդերը) վերածվելով սոսինձանման նյութի, կպչում են բջիջների պատերին այնքան ամուր, որ այնտեղից հեռացնելը մարդկանց և մեղուների միջոցով հնարավոր չէ, դրա համար էլ վարակված ընտանիքը միշտ մնում է այնտեղ բջիջներին կպած։

Ուժեղ վարակված ընտանիքներում առատությամբ կրճատվում է դուրս եկող մեղուների քանակը, որը գնալով հասնում է չնչին քանակության, որովհետև իրիուրները (սրդերը) հարանցակ վիճակում մնում են և դրանից շատ քչերն են զարգանում, մեղուները դուրս գալիս, դրա համար էլ ընտանիքում ավելի շատ է մնում մեղուների քանակը, քան թե նոր դուրս եկող մեղուներինը

Ա 19295

Այստեղից պարզվում է, թե ինչու փտախտով վարակված ընտանիքներն արագ թուլանում են սովորաբար ամռանը կամ աշնանը և ամբողջությամբ հանգում են ձմռանը, կամ վաղ գարնանը: Բայց վարակված ընտանիքները կարող են ձմեռել, բայց նրանց մոտ հիվանդությունն սկսում է հայտնվել ոչ թե ամռանը, կամ դարձնան երկրորդ կեսերին, այլ համեմատաբար ավելի շուտ:

Ամերիկյան փտախտը.— Տարածվում է շատ դանդաղ և վարակված ընտանիքն այլևս չի առողջանում, եթե մարդն օգնություն չդա. հիվանդ ընտանիքը վաղ թե ուշ կհանդի:

Սկզբից մեղուները փորձում են մեռած թրթուրի (որդի) հարևանակի դիակը բջիջներից հանել, բայց որովհետև նրանք ամուր կրպած են պատերին, ուստի նրանց մաքրելն, ինչպես մենք տեսանք, դժվար է, բայց որոշ մեղուներ այդ վարակը վերցնում են իրենց վրա և դրանով վարակում են մեղրը, որով և վարակում են թրթուրներին (որդերին):

Հիվանդության տարածման համար ավելի վտանգավոր է այն մեղրը, որը գտնվում է հիվանդոտ թրթուրներով (որդերով) մեղրոտ հատների բջիջների մեջ:

Ամերիկյան փտախտ հիվանդությունը տարածում են նաև փեթակում ապրող կամ ներս ու դուրս անող որոշ պարազիտներ և միջատներ. օրինակ՝ մոմի ցեցը, կրետը, մրջյունը և այլն:

Այս հիվանդությունը մեղվանոցում ընտանիքից ընտանիք իմնականում անցնում է մեղուների գողության միջոցով,— ուժեղ ընտանիքները հարձակվելով հիվանդությունից թուլացած ընտանիքի վրա թալանում և այդպիսով վարակվում են: Այստեղ քիչ դեր չի խաղում նաև մեղվապահը, երբ մի ընտանիքից մյուս ընտանիքին շրջանակով ուժ կամ կերապաշար է տալիս, կամ ձմեռանոցում հանդած ընտանիքի մեղրահացերը բաժանում է առողջ ընտանիքներին և այսպիսով վարակում նրանց:

Հիվանդությունը տարածվում է նաև այն ժամանակ, երբ մեղվապահը հիվանդ ընտանիքին ստուգելուց հետո, առանց ձեռքերը կամ գործիքներն ախտահանելու, ստուգում է առողջ ընտանիքները:

Նախազգուշության համար մեղվանոցների կազմակերպման օրից պետք է ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի հիվանդության օջախ չառաջանի մեղվանոցում: Դրա համար խոշոր ուշադրություն պետք է դարձնել արդեն տեղից գնված մեղուների վրա,

գնելուց առաջ պետք է լավ ստուգել և տպա վերցնել։ Ուրիշ տեղից գույք կամ իրվենտար գնելուց պետք է լավ ախատահանել և տպա դրանց մեղմանցում օգտագործել։

Սանիտարական միջոցառումներ.— Այս հիվանդության դեմ պայքարելու միակ միջոցառումը մեղուներին հիվանդ փեթակից հեռացնելն է, որը կոչվում է թափ տալ։ Մեղուները հիվանդ փեթակից տեղափոխվում են մաքուր և ախատահանված փեթակի մեջ, որտեղ նրանք նորից սկսում են իրենց համար նոր բույն և նոր մեղրահացեր կառուցել, և այնտեղ զարգացնել առողջ ձվեր, թրթուրներ և հարանյակներ (որդ և ձվեր)։

Այս թափ տալու մեթոդի էությունը դա հիվանդ ընտանիքին արհեստականորեն բնական ձագի պայմանների մեջ դնելն է. երբ հիվանդ ընտանիքին թափ ենք տալիս հիվանդությունից զերծ մի նոր փեթակի մեջ, այդ թափ տալու ժամանակ մեղուներն զգալով որոշ վատող, անմիջապես իրենց մեղրապարկը լցնում են մեղրով, թափ տված մեղուները թողնում ենք դատարկ փեթակում առանց մեղրահացերի, առանց կերի 48 ժամ, այն հաշվով, որ մեղուներն իրենց մեղրապարկում եղած մեղրի որոշ մասն օգտագործեն որպես իրենց կենսատար։ կեր՝ մի մասով կերակրեն մորը, բուներին և բացի դրանից որոշ մասն էլ օգտագործեն որպես լրացուցիչ կեր՝ մոմ արտադրելու համար։

Այդ ընտանիքներին երկու օրից հետո նորից թափ ենք տալիս մի ուրիշ նոր ախատահանված փեթակի մեջ և անմիջապես տալիս ենք մոմաթերթեր, որոնց բջիջների կառուցելը կտևի 1—2 օր. մայրն այդ բջիջների մեջ կսկսի ձվեր դնել, մեղուները դրանց կբարձրանեն կերակրել միայն 3 օրից հետո, այն էլ կախնահյութով, որը գերծ է հիվանդության հարուցիչներից. ուրեմն, եթե հաշվենք լինենք այդ ժամանակաշրջանը, կստացվի հետևյալ պատկերը, որ մեղուներն իրենց մեղրապարկերում վերցրած մեղրը կամաարամա օգտագործում են 5—7 օրվա ընթացքում, մինչև նոր թրթուրների (որդերի) խնամքը։ Այստեղից վստահ կարելի է ասել, որ մեղվի մեղրապարկում եղած հին փեթակից վերցրած մեղրը բոլորովին չէր կարող մնալ առանց օգտագործելու, ուրեմն 5—7 օր հետո նոր թրթուրներին (որդերին) արդեն նրանք կսկսեն կերակրել դաշտից բերած թարմ նեկտարով, որը զերծ է վարակից։

Բազմաթիվ փորձերը ցույց են տվել, որ նախազգուշական մի-

ջոցների լրիվ և ճշգրիտ կերպով կիրառմամբ թափ տված ընտանիքներից նոր հիվանդացողներ հազվագյուտ են պատահում։

Ամերիկյան փտախտի դեմ պայքարը կազմակերպելիս պետք է աշխատանքները դասավորել այնպես, որ հիվանդ ընտանիքներից ամբողջությամբ և հիմնովին վերացվեն վարակի աղբյուր հանդիսացող միկրոօրգանիզմները, այդ նպատակով պայքարի գործադրման ընթացքում լինել վերին աստիճանի զգույշ և աշխատանքները կատարել շատ արագ։ Զգույշ պետք է լինել նրա համար, որ մեղվանոցում դաղություն կամ հարձակում առաջ չգա, հետո ոչ մի վարակված նյութ, փեթակ, շրջանակ, մեղրահաց, մոմի կտոր, մեղվանոցում դես ու դեն թափված չթողնել, որոնք կարող են առողջ ընտանիքների վարակման աղբյուր դառնալ. արագ պետք է աշխատել, որպեսզի հնարավորության սահմաններում նվազագույնի հասցվի նոր վարակումներ առաջացնելու բոլոր հավանականությունները, դրա համար էլ չի կարելի հիվանդներին թափ տալ վաղ գարնանը, երբ չկա օժանդակ մեղրաբերք։

Եթե մեղվանոցում կան ամերիկյան հիվանդությունից ապաքինված ընտանիքներ, պետք է դրանք նախօրոք միացնել իրար հետ, ուժեղացնել, հետո միայն բուժումը սկսել։

Բուժման ժամանակ, երբ ամեն ինչ վերևում նշված ձևով կազմակերպել և նախապատրաստել ենք, թափ տալու աշխատանքները պետք է սկսել այն ժամանակ, երբ բնության մեջ կա օժանդակ մեղրաբերք և մեղուները սկսել են մոմ արտադրել, մեղրահացեր գործել, որպեսզի թափ տալուց անմիջապես հետո մեղվի ընտանիքները կարողանան մոմաթերթի բջիջները գործել և կարճ ժամանակում պատրաստել իրենց բույնը։

Այն մեղվանոցները, որտեղ հիվանդ ընտանիքների քանակը քիչ է, բուժման աշխատանքները կատարվում են մեղվանոցում։ Թափ տալու աշխատանքներն սկսել օրվա տաք ժամին և հնարավորության սահմանում վերջացնել մեկ օրում, այն էլ կարճ ժամանակում, թողնելով միայն մեկ երկու հատ հիվանդացող-փեթակներ։ Նայած մեղվանոցի հիվանդ ընտանիքների քանակին, դրանց մեջ պետք է հավաքել թափ տված հիվանդ ընտանիքներից հանած ձվերով, թրթուրներով և հարսնյակներով (որդ և ձվեր) մեղրահացերը։

Հիվանդանոց-փեթակներն ընտրում ենք մեղվանոցի հիվանդ ընտանիքներից և ոչնչացնում ենք նրա մորը, այդ ընտանիքի վրա դնում կորպուսներ և դրանց մեջ հավաքում ձվերով, թրթուրներով, հարսնյակներով (որդ ու ձվով) և մեղրով շրջանակները՝ ու այդ վիճակում թողնում 21 օր, մինչև նրա մեջ եղած առողջ թրթուրներից (որդ) ու ձվերից դուրս գան մեղուներ, որից հետո այդ հիվանդանոց-փեթակներում եղած ընտանիքները բուժում ենք նույն ձևով, այսինքն՝ թափ տալով։ Այդ հիվանդանոց-փեթակներից հանած բոլոր մեղրահացերը տեղափոխում ենք մի փակ սենյակ, որտեղ մեղուների մուտքը հնարավոր չի լինի մինչև նրանցից մեղրը քամելը և մեղրահացերի հալելը։

Մեղվաբուծական այն խոշոր տնտեսությունները, որոնք ունեն մեծ քանակությամբ հիվանդ ընտանիքներ, պետք է կազմակերպեն հիվանդանոց-մեղվանոցներ, որտեղ տեղափոխեն իրենց մեղվանոցներից բոլոր հիվանդ ընտանիքները և այնտեղ կազմակերպեն թափ տալու բուժման աշխատանքները։

Հիվանդանոց-մեղվանոցը, ինչպես վերևում նշեցինք, պետք է մոտ 4—5 կիլոմետր հեռու լինի առողջ մեղվանոցներից, որպեսզի թափ տալու ժամանակ ոչ մի կասկած չլինի հիվանդ մեղվանոցի ընտանիքներից հիվանդություն առողջ ընտանիքներին փոխանցվելու մասին։

Հիվանդանոց-մեղվանոցների հետ կարելի է վարվել երկու ձևով՝

ա) բոլոր թափ տված ընտանիքները տեղափոխել և դնել առողջ մեղվանոցներում.

բ) հիվանդանոց-մեղվանոցը թափ տալ և ամբողջությամբ թողնել տեղում, մինչև հաջորդ տարի և դա կազմակերպել որպես առանձին մեղվանոց. իհարկե այդ հանդամանքը կախված է տնտեսության մեծությունից և շահերից։

Այն մեղվանոցները, որտեղ ընդամենը մեկ հիվանդ ընտանիք կա, ապա նրան թափ տալուց հետո, նրանից հանած ամբողջ ձվերը, թրթուրները և հարսնյակները (որդն ու ձուն) մեղրահացերի հետ պետք է հալել և մի անգամից աղատվել դրանից։ Իսկ մեղրը կարելի է օգտագործել որպես սնունդ։

Ամերիկյան փտախտով հիվանդ ընտանիքներին պետք է թափ տալ կրկնակի, դա կարելի է հասկանալ հետևյալ կերպ. թափ տա-

լու աշխատանքներն սկսում ենք այն ժամանակ, երբ ամեն ինչ վերջում ճշված ձևով նախապատրաստել ենք մեղվանոցում. հիվանդ ընտանիքն իր փեթակով վերցնում ենք տեղից և դնում մի կողմի վրա, հիվանդ փեթակի տեղը հողը բահով շուռ տալիս, վրայից ծածկում կրով, մոխրով կամ մաքուր հողով, որից հետո հիվանդ փեթակի տեղը դնում մաքուր ախտահանված. բոլորովին դատարկ փեթակ, որի մեջ դնում ենք բոլորովին դատարկ շրջանակի ձողեր և երեսը ծածկում մաքուր ծածկոցով։ Այդ փեթակի արկանոցի առաջ փռում ենք մի մեծ սավան, որի ծայրը միացնում ենք արկանոցի տախտակին։ Հիվանդ ընտանիքի մայրը շատ զգույշ վերցնում և դնում ենք վանդակի մեջ ու կախում նոր փեթակի բոլորովին դատարկ շրջանակների կամ ձողերի մեջտեղում, որից հետո հիվանդ փեթակից մեկ առ մեկ հանում շրջանակները և ուժգնությամբ թափ ենք տալիս նրանց վրայի մեղուները սավանի վրա։ Մեղուները՝ սավանի վրայից, արևի տակից, սկսում են մտնել դատարկ փեթակը և կծիկ կազմում մայր մեղվի վրա, սավանը հերթով օգտագործում ենք հիվանդ ընտանիքներին թափ տալու համար, որից հետո զգուշությամբ փաթաթում և տանում ներս։

Մեղուները թափ տված վիճակում մնում են 48 ժամ առանց մեղրահացերի (ոչ մի դեպքում չի կարելի թե՛ առաջին և թե՛ երկրորդ թափ տալու ժամանակ նրանց մեղրահացեր տալ), որից հետո բերում ենք ախտահանված մի նոր փեթակ, որի մեջ պետք է դրված լինի այնքան մոմաթերթով կպցրած շրջանակներ, որքան ընտանիքը կարող է պատել։ Թափ տված հիվանդ փեթակը տեղից վերցնում և նրա տեղը դնում ենք նոր, ախտահանած փեթակ, նրա առջև փռում ենք լվացած, ախտահանված սավան, որից հետո բաց ենք անում առաջին անգամ թափ տված փեթակը և այստեղից մորը վանդակով վերցնում ենք ու տեղափոխում մի ուրիշ վարակազերծ վանդակի մեջ և դնում նոր փեթակի շրջանակների մեջտեղը, որից հետո փեթակից մեղուները երկրորդ անգամ թափ ենք տալիս փեթակի առաջ փռած սավանի վրա. մեղուները՝ սավանի վրայից փեթակը մտնելուց հետո, սավանը զգուշությամբ վերցնում ենք և օգտագործում մյուս հիվանդների համար, իսկ վերջում փաթաթում և տանում ենք ներս ախտահանելու համար։ Թափ տված ընտանիքների մորը պետք է վանդակից ազատել երկրորդ թափ տալուց մի քանի ժամ հետո։

Բամբ տված բնատանիքները որոշ ժամանակ մինչև թրթուրներ (որդ ու ձվի) 2—3 սերունդի զարգանալը, պետք է վերցնել կասկածի տակ, որից հետո միայն պետք է հաշվել որպես առողջ բնատանիքներ։

Բամբ տալու աշխատանքները վերջացնելուց անմիջապես հետո անհրաժեշտ է հիվանդներից հանած մեղրահացերը հալել, իսկ եթե մեղրով լիքը մեղրահացեր կան, կարելի է մեղրը բամել, հետո մոմը հալել։

Ամերիկյան փտախտով հիվանդ բնատանիքն առաջին անգամ իր հին փեթակում Բամբ տալը, իմ կարծիքով սխալ է, պետք է երկու անգամն էլ Բամբ տրվի մաքուր ախտահանված փեթակում։

Մեղվանոցի վարակված գույքն ու ինվենտարը, որը հավաքել էինք փակ սենյակում, պետք է առանց ձգձգումների մաքրել և ախտահանել։ Փեթակների մեջ եղած մոմերը մաքրել և հետո զոդիչ (պայալնի) լամպով փեթակի ներսից՝ ամեն կողմը լավ այրել։

Նկ. 6

Փեթակի կորպուսի ախտահանումը զոդիչ լամպի կրակով

մինչև խանձվելը, որից հետո կարելի է նրան օգտագործել որպես վարակազերծ փեթակ։

Զոդիչ (պայալնի) լամպ չլինելու դեպքում փեթակները կարելի է ախտահանել հայի լավ տաքացրած թոնրի վրա, փեթակը շուռ տված պահելով։ Եթե վերը նշված միջոցներից ոչ մեկը չի կարող գտնվել, կարելի է դիմել ամենապրիմիտիվ միջոցին. այսինքն փեթակի ներսից քսել նավթը և այրել մինչև լավ խանձվելը, որից հետո կափարիչը ծածկել, որ անմիջապես կրակը հանգչի։

Հիվանդոտ, վարակված դատարկ շրջանակներն առանց խնայելու կարելի է վառել, իսկ եթե շրջանակների շատ սուր պահանջ կա, կարելի է զոդիչ (պայալնի) լամպով այրել, կամ քանդել, դնել մեծ կաթսայի մեջ և 2—3 ժամ եռացնելուց հետո օգտագործել։

Երեսի ծածկոցները պետք է այրել, իսկ եթե նոր են, պետք է ջրի մեջ եռացնել մինիմում 2 ժամ, որից հետո հարթուկել և ապա օգտագործել. նույն ձևով պետք է վարվել նաև տաքացման պարկերի և բարձերի հետ։

Ամերիկյան փտախտով վարակված ընտանիքներից ստացած մեղրը պետք է պահել շատ ապահով, մեղուների համար անմատչելի վայրում և ոչ մի դեպքում այդ մեղրը չօգտագործել մեղուներին կերակրելու համար։

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՏԱԽՏ

Եվրոպական փտախտը կոչվում է նաև թրթուրների (բաց որդի) փտախտ։ Այս հիվանդությունը նպաստավոր պայմաններում ավելի արագ է տարածվում փեթակի ներսում և մեղվանոցում, քան ամերիկյան փտախտը, դրա համար էլ շատ արագ թուլացնում է մեղվի ընտանիքները և քայքայում մեղվանոցները. ժամանակին մարդկային օգնություն չլինելու դեպքում, ամբողջ մեղվանոցները կարող են ոչնչանալ։

Այս հիվանդությունը համարվում է սուր-վարակիչ հիվանդություն, որն ավելի շատ է տարածված, քան ամերիկյան փտախտը, այս հիվանդության հարուցիչը հանդիսանում է Պլյուտոնի (Плютон) բացիլը։

Հիվանդությունը հայտնվում է մեկ մոտ, ցածրադիր դաշտային շրջաններում՝ գարնան երկրորդ կեսերին, իսկ լեռնային շրջաններում՝ ամռան առաջին կեսերին, կերի սակավության և ցուրտ տնձրևային եղանակների պայմաններում։

Եվրոպական փտախտի ախտանիշները հետևյալներն են՝ մեղրահացերի բջիջների մեջ ձուն, թրթուրը և հարսնյակը դասավորված են ոչ սիմետրիկ, այսինքն ոչ համաչափ կերպով, այլ լինում են խառն խայտաբղետ։

Մի բջիջում լինում է ձու, մյուսում՝ հարսնյակ, հարևան բջիջում՝ թրթուր, կամ թրթուրի մնացորդ և այլն։

Եվրոպական փտախտով թրթուրները (որդերը) վարակվում են թրթուր վիճակի 3—4 օրեկան հասակում և մեռնում են նախքան հարսնյակ դառնալը, այսինքն նախքան սերիկելը։ Հաղվագյուտ են պատահում դեպքեր, երբ թրթուրները (որդերը) մեռնում են սերիկած վիճակում։

Այս դեպքում ես, ինչպես ամերիկյան փտախտն է, սկսում է բջիջների սերիկների գույնը մուգանալ, փոս ընկնել և ծածկվել։ Այս է պատճառը, որ անփորձ մեղվապահը շատ հաճախ այս երկու հիվանդությունները խառնում է մեկը մյուսին և չի կարողանում տարբերել դրանց ախտանիշներն իրարից։

Ուժեղ ընտանիքները շատ հաճախ եվրոպական փտախտով մեռած թրթուրների բջիջներից հանում և մաքրում են, դա է պատճառը, որ շատ հաճախ բջիջների հատակին տեսնում ենք թրթուրների մնացորդներ։

Եվրոպական փտախտով մեռած թրթուրն սկզբնական շրջանում կորցնում է իր կլոր ձևը և բնական կաթնանման գույնը, դառնում է բաց դեղնավուն։ Վարակված թրթուրը երբեմն բջիջի հատակին ընկած է լինում մեջքի վրա, երկու ծայրերը դեպի վեր, կամ օղակաձև ընկած բջիջի հատակին՝ երկու ծայրերը ուղղված դեպի բջիջի հատակը, կամ թե չէ ստանում է բոլորովին պատահական տեսք. դրան հակառակ ամերիկյան փտախտով վարակված կամ մեռած թրթուրը միշտ ընկած է լինում բջիջի ցածի կողքին։

Ասենք ամենաբարդ, երբ հիվանդությունը հնանում է թրթուրների փտումն ավելի է ուժեղանում, թրթուրի գույնը փոխվում և դառնում է ավելի մուգ դեղին կամ գորշագույն տեսք է ստանում, կորցնելով իր թափանցիկությունը։

Գույների փոփոխությունը բացատրվում է, նրանով, որ թրթուրի փտելու ժամանակ նրա մեջ մուտք են գործում նաև ուրիշ բակտերիներ, որի հետևանքով էլ փտող թրթուրն արագորեն փոխում է իր գույնը։

Եվրոպական փտախտով մեռած թրթուրները (որդերը) չեն կպչում բջիջների պատերին և չունեն այն մածուցիկությունը, ինչպես ուներ ամերիկյան փտախտով մեռած թրթուրը, երբեմն պատահում է, որ այս հիվանդություններից մեռած թրթուրներից ոմանք նույնպես ունենում են որոշ մածուցիկություն, բայց ոչ այնպես ձգվող, երկարող, ինչպես տեսանք ամերիկյան փտախտի դեպքում։

Եվրոպական փտախտը շատ թույլ հոտ ունի, երբեմն հիվանդության որոշ շրջանում զգացվում է թթու հոտ, դրա համար էլ միշտ մի շարք մեղվապահներ այդ հիվանդությունն անվանում են թթու որդի հիվանդություն (փտախտ)։



Նկ. 7.
Պլյուտոնի բացիլը։

Այս հիվանդության հարուցիչը հանդիսանում է Պլյուտոնի բացիլը, որը հայտագործվել է 1912 թ.։ Պլյուտոնի այդ բացիլները

շատ այլաձև են իրենց մեծությամբ (տես նկար 7)։ Այս բացիլը ապրել չի գոյացնում և դիմացկունությունը շատ թույլ է. շատ շուտ ոչնչանում է, 63° (C-ի) տաքացրած ջրում դիմանում է մոտ 10 րոպե, իսկ 79° տաքացրած մեղրի մեջ դիմանում է նույնպես 10 րոպե։

Եվրոպական փտախտ հիվանդության ժամանակ բացի Պլյուտոնի բացիլից, հանդիպում ենք նաև այլ միկրոօրգանիզմների, որոնք այս կամ այն ձևով ազդում են և փոխում հիվանդության պատկերը։ Պլյուտոնի բացիլից բացի կա նաև Ալվեյի (Alvei) բացիլը, որ թրթուրի փտումից առաջանում է տհաճ հոտ, հիշեցնելով սաթի քրտինքի հոտը։ Ալվեյի բացիլն առաջ է գալիս, երբ հիվանդությունն ինքնահոսի է թողնված, այդ դեպքում հայտնվում է այսպես կոչված փտախտի «դարշահոտ տեսակը». Եթե այդ հիվանդ թրթուրների մեջ ընկնի մեղվի ստրեպտոկոկի (стрептококъ), ապա կառաջանա թթու հոտ, այս «թթու տեսակ» փտախտը կամ «թթու փտախտը» որը 60—70° (ըստ C-ի) տակ արագ ոչնչանում է։



Նկ. 8.

Այս հիվանդության համար ավելի բարենպաստ հող են հանդիսանում ցուրտ եղանակները և կերի՝ մեղրի ու ծաղկափոշու պակասությունը։ Այս ընտանիքներում, որոնք ապահովված չեն լավ տաքացումներով, բայց թրթուրները շատ հեշտությամբ կարող են վարակվել եվրոպական փտախտ հիվանդությամբ, նամանավանդ երբ ընտանիքն ապահովված չէ լրիվ կերապաշարով։





Նկ. 9 և 10.
Ալվեսի բացիլը և սպորը։

Այս հիվանդությունը սուր-վարակիչ հիվանդություն է և փեթակի ներսում վարակը տարածում են ջահել կերակրող մեղուները։ Նրանք մաքրում են բջիջները հիվանդությունից մեռած թրթուրներից և իրենք իրենց վրա կրում են վարակը ու կերակրելով առողջ թրթուրին, վարակում են նրանց։

Այսպիսով տեսնում ենք թե որքան հեշտ ճանապարհով փեթակի ներսում վարակը մի թրթուրից անցնում է մյուսին։ Առաջին 7—8 օրում վարակը մի թրթուրից անցնում է մյուսին շատ դանդաղ, իսկ հետո շատ արագ կերպով ծավալվում է ամբողջ ընտանիքում։

Հիվանդության տարածումը ընտանիքից ընտանիք, կամ մեղվանոցից մեղվանոց առայժմ այնքան էլ ուսումնասիրված չէ, բայց կարելի է ենթադրել, որ դա առաջ է գալիս հետևյալ ճանապարհով՝

1. Մեղուները դուրանում և թալանում են հիվանդ ընտանիքի մեղրը և դա բերում փեթակ, ապա վարակված մեղրով կերակրում են առողջ թրթուրներին և վարակում նրանց։

2. Երբ հիվանդ ընտանիքներից (չիմանալով նրանց հիվանդ լինելը) առողջ ընտանիքներին տալիս ենք մեղրահացերով մեղր, ձվեր, թրթուրներ և հարանյակներ (որդ ու ձու) և այլն։

3. Հիվանդ մեղվանոցի գույքն առանց ախտահանելու օգտագործում ենք առողջ մեղվանոցներում։

4. Հիվանդ ընտանիքներից վերցրած արհեստական ձագերի մի տեղից մյուս տեղ փոխադրումը, կամ առանց ստուգելու հիվանդ ընտանիքների գնումները կամ վաճառումները։

5. Շուկայից կամ այլ մեղվանոցից մեղր գնելով և մեղուներին կերակրելով։

6. Մեղվապահի անփութության պատճառով, երբ հիվանդ ընտանիքներն ստուգելուց հետո ձեռքը կամ գործիքներն առանց ախտահանելու ստուգում է առողջ ընտանիքներին։

Եվրոպական փտախտի հարուցիչները լայնորեն տարածված են բնության մեջ, նրանք գտնվում են հողի մեջ, առողջ ընտանիքի փեթակում և այլն, որպեսզի նրանք գործեն, անհրաժեշտ են բարենպաստ պայմաններ։

Եվրոպական հիվանդության դեմ մեղվի ընտանիքները տարբեր դիմացկունություն ունեն։ Այն ընտանիքները, որոնք ավելի

Էներգիա ունեն լավ են աշխատում, իրենց բույնը սրաց և լավ մաքրում են մեռած թրթուրների (որդերի) մնացորդներից և ավելի դիմացկուն են հիվանդության նկատմամբ, երբեմն իրենք իրենց բույնը մաքրում են հիվանդությունից։ Դրան հակառակ որոշ ընտանիքներ, իրենց բույնը լավ չեն մաքրում, բջիջներում մեռած թրթուրները (որդերն) երկար ժամանակ մնում են բջիջներում, այսպիսով վարակված թրթուրներն ընտանիքներում կազմում են մոտ 50—75%։



Նկ. 11.
Եվրոպական փտախտի տարբեր ախտանիշները։

Եվրոպական փտախտի բուժման միջոցը Իմնականում Թափ տալու եղանակն է, որի բուժման ընթացքը շատ կարճ է և արդյունավետ։ Հիվանդ ընտանիքի թափ տալու տեխնիկան նույնն է, ինչ որ ամերիկյան փտախտի բուժման տեխնիկան, միայն այն տարբերությամբ, որ եվրոպական փտախտով վարակված ընտանիքներին երբեմն կարելի է թափ տալ սկզբում իր արկղում—իսկ 36—48 ժամ հետո թափ տալ մաքուր արկղի մեջ և նրան տալ մո-

մաթերի։ Բարի տալու տեխնիկայի, հիվանդանոց-փեթակներ կազմակերպելու և գույքի ախտահանման վերաբերյալ մանրամասնությունը տես «Ամերիկյան փոտախտ» գլխում։

ՄԵՂՎԻ ՓՏԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄԸ ՍՈՒԼՖԱՏԻԱԶՈՒ ՆԱՏՐԻՈՎ

Վերջին ժամանակներս մեղվի փոտախտ հիվանդության դեմ օգտագործում են սուլֆատիազոլ նատրի դեղանյութը, որը իհարկե ավելի է իր գրական արդյունքը։

Անհրաժեշտ է պատրաստել 1 : 1-ի հարաբերությամբ շաքարաջուր և մեկ լիտր շաքարաջրին խառնել 0,3—0,5 գրամ սուլֆատիազոլ նատրի։ Սկզբից կշռել սուլֆատիազոլ նատրին, լուծել կես բաժակ տաք ջրի մեջ և հետո խառնել շաքարաջրին։ Շաքարաջուրը դոզ վիճակում կերակրել փոտախտով վարակված ընտանիքներին 4—5 օրը մեկ անգամ 0,5—1,0 լիտրի սահմաններում։

Բուժիչ կերը պետք է տալ մեղվի ընտանիքներին նրանց բազմացման շրջանում, երբ ընտանիքներում շատ քիչ կերապաշար կա։

Սուլֆատիազոլ նատրիի դրական հատկությունը կայանում է նրանում, որ հիվանդ ընտանիքը բուժիչ կերը ստանալուց հետո ընտանիքում եղած նոր վարակված, բայց դեռ չմեռած թրթուրները աստիճանում են, շարունակում են աճել, հարմնյակավորվել և դառնալ նորմալ հասունացած մեղուներ։ Իսկ մնացած թրթուրների հիվանդանալը, իրենց վարակման շրջանում դադարում է։ Մինչև բուժումը մեռած արգելի դիակները բջիջների միջից մաքրում են, որից հետո փեթակներում ստացվում է ամբողջությամբ առողջ նորմալ թրթուրներ և հարմնյակներ, որի հետևանքով ընտանիքներում թրթուրների հիվանդանալը և մեռնելը դադարում է, երիտասարդ մեղուների աճեցողությունը գնում է առաջ կտրուկ, ընտանիքները ժամանակին ուժեղանում են, իրենց արտադրողականությամբ դառնում են նորմալ ընտանիքներ։

Սուլֆատիազոլ նատրին ամբողջությամբ չի ոչնչացնում, սպանում փոտախտի հարուցիչը, այլ նրա օգնությունը կայանում է նրանում, որ այդ դեղը կերի հետ ընկնելով թրթուրի ստամոքսը, հի-

վանդության հարուցիչները այդ դեպի ներկայությամբ այլևս չեն աճում։

Սուլֆատիազոլ նատրիի ազդեցությունը մեղվի հիվանդ ընտանիքների բուժման վրա թողնում է տարբեր ազդեցություն, մի շարք ընտանիքներ զգալիորեն բուժվում են, իսկ մի խումբ ընտանիքների վրա այնքան էլ ուժեղ ազդեցություն չի թողնում, այն է, բուժիչ կերը ընտանիքում վերջանալուց հետո նորից հիվանդությունը կրկնվում է։ Դրա համար էլ ավելի ճիշտ կլինի այն, որ փտախտով հիվանդ ընտանիքներին կերակրենք սուլֆատիազոլ նատրիով, որպեսզի նրանց բազմացման ընթացքը չդադարի, ընտանիքները չհյուծվեն և մեղվաբուծական տնտեսություններն իրենց եկամուտից (բերքից) չզրկվեն, որից հետո փտախտը մեղվի ընտանիքներից վերջնականապես վերացնելու համար անհրաժեշտ է միանգամից թափ տալ մաքուր վարակազերծած փեթակը և հանած մեղրահացերի մեկը քամել, իսկ մոմը հալել, այսպիսով հիվանդությունը իսպառ կանցնի։

ՏՈՊՐԱԿԱԱՁԵՎ ԿԱՄ ՊԱՐԿԱԱՁԵՎ ՓՏԱԽՏ

Տոպրակաձև փտախտը համարվում է մեղվի թրթուրի (որդի) վարակիչ հիվանդություն, որի հարուցիչը հանդիսանում է վիրուսը (լվացող)։ Նա սովորաբար վարակում է թրթուրին հարսնյակ ձևավորվելուց առաջ, հիվանդությունը հայտնվում է գարնան երկրորդ կեսերին և ամռան սկզբներին, բայց կարող է երբեմն երևալ նաև ամռան ու աշնան ամիսներին։ Այս վիրուսներն այնքան փոքր օրգանիզմներ են, որ ամենաուժեղ մանրադիտակով ենթամ հնարավոր չէ տեսնել և բացի այդ անցնում է զտող պարզոնով, պարզացնող հողի և ֆարֆորոմի (ֆիլտրից) ամենանուրբ գործիքներից, այս փոքրիկ օրգանիզմը սովորաբար ավելի արագ է բազմանում, քան մյուս միկրոօրգանիզմները։

Վիրուսի դիմացկունությունը թույլ է՝ 55—65° (ըստ C-ի) տաքացրած ջրի մեջ, նա մեռնում է 10 րոպեի ընթացքում, 70°-ի տաքացրած մեղրի մեջ, նույնպես ոչնչանում է 10 րոպեում, իսկ սենյակի սովորական ջերմության տակ ոչնչանում է 22 օրում, արևի տակ՝ 4 ժամում, մեղրի մեջ՝ 24 օրում, 1% կարբոլյան թթվի մեջ՝ 38 օրում։

Այս հիվանդությունը տարածված է Հայաստանի մի շարք շրջաններում և այս տոպրակաձև հիվանդությունից ընտանիքների կորուստները մեծ չեն։ Պատահում է այս հիվանդության չարորակ տեսակը, երբ ընտանիքներին չափից ավելի թուլացնում է նաև արդյունավետ դարձնում, երբեմն էլ երեխ մարդիկ պետք եղած միջոցները ձեռք չառնեն, կարող է ամբողջ ընտանիքը թուլանալ և հանդիպ. ոչնչանալ։

Այս հիվանդության ախտանիշները հետևյալներն են՝ մեղրահացի բջիջների մեջ թրթուրները, ձվերը, հարսնյակները լինում են ցրված վիճակում. ինչպես ասել ենք, մյուս վարակիչ հիվանդությունների ժամանակ, թրթուրները սովորաբար մեռնում են այն ժամանակ, երբ մեղուները նրանց սերկում են, մեղուներն սկսում են մեռած թրթուրների (որդերի) սերկը բացել ամբողջությամբ, կամ որոշ մասով ստացվում է այնպիսի տպավորություն, որ թրթուրները (որդերը) մեռել են բաց վիճակում։

Մեղուները սերկերը ծակում են հաճախ շատ մեծ, երբեմն էլ շատ փոքր քորոցի գլխի չափով, երբեմն էլ սերկը լրիվ վերցնում են։

Տոպրակաձև փտախտով մեռած թրթուրը (որդը) միշտ մեջքի վրա պառկած է լինում բջիջի ցածի պատին, գլուխը վեր ցցած։ Տոպրակաձև փտախտով նոր մեռած թրթուրի (որդի) գույնը լինում է բաց դեղնավուն, բայց գնալով մի քանի օրվա ընթացքում գլուխը կարծրանում է և սևանում, մարմինն ստանում է սրճագույն տեսք։ Մեռած թրթուրը (որդը) որքան հնանում ու փտում է, այնքան ավելի մուգ գույն է ստանում, իսկ երբեմն նույնիսկ սևանում է։

Տոպրակաձև թրթուրի (որդի) փտախտով վարակված մեռած թրթուրի (որդի) մաշկը փտելու ընթացքում կարծրանում է, այնպես, որ նրա ամբողջ մարմինը կարելի է առանց դժվարության դուրս հանել բջիջից, որպես մի լիքը պարկ. այդ է պատճառը, որ այս հիվանդությունը կոչվում է տոպրակաձև փտախտ, եթե այդ պարկը պատռենք, միջից դուրս կթափվի սպիտակ, ջրալի և մանր, կարծես ավազախառն հեղուկ։ Տոպրականման վիճակում մեռած թրթուրը (որդը) նման է առողջ թրթուրին (որդին), այդ հիվանդությունից մեռած թրթուրներին մեղուները շատ հեշտությամբ մաքրում են և բջիջները դարձնում վարակազերծ։

Եթե մեղուներն այդ մեռած թրթուրներին (սրդերին) ժամանակին չեն մաքրում բջիջներից, նրանց միջի հեղուկային մասը կամաց-կամաց գոլորշիանում է, թրթուրն (սրդն) իր ձևը կորցնում և ասիճանաբար չորանալով դառնում է թեփուկ. բայց թեփուկը չի կպչում բջիջի պատին և մեղուներն այս վիճակում շատ հեշտությամբ մաքրում են բջիջները մեռած թրթուրների (սրդերի) մարմիններից։

Տոպրակաձև փտախտով մեռած թրթուրը (սրդը) բոլորովին թեչանման չի ձգվի և նրանից առանձնապես հոտ չի գալիս, եթե թթին մոտեցնենք, երբեմն կարող է հոտած մսի հոտ գալ։ Այս հիվանդությամբ մեռած թրթուրներն (սրդերն) օրըստօրև այնպես են փոխում իրեն դուրը, որ շատ դեպքում անփորձ մեղվապահները դժվարանում են ճիշտ դիագնոզ տալը, չնայած նրա բազմաթիվ ախտանշանների ցայտուն տարբերությանը։

Այս հիվանդության տարածումը ընտանիքից ընտանիքին, շատ դանդաղ է անցնում։ Հիվանդությունը կարող է անցնել մեղրահացերով, ձու, թրթուր և հարսնյակներ տալու միջոցով։ Այս հիվանդության դեմ նախազգուշական միջոցներ ձեռք առնելու համար, մեղվանոցում պետք է ընտանիքները պահել ուժեղ և նրանց հետ տանել լավ խնամք, բույնը պահել խիտ, ընտանիքը պետք է լավ տաքացումներով ապահովել և ունենալ բավարար չափով լավորակ կեր ձմեռվա և գարնան համար։

Թույլ վարակված նորմալ ընտանիքները հեշտությամբ մաքրում են իրենց բույնը, դրա համար էլ թույլ ընտանիքներին պետք է ուժեղացնել, որպեսզի մեղուներն իրենք բջիջները մաքրեն մեռած թրթուրներից ու բուժեն ընտանիքը հիվանդությունից. իսկ ուժեղ վարակված ընտանիքներին պետք է թափ տալ, վարակազերծ, առողջ ընտանիքներից վերցրած մեղրահացերը փոխել։

ԵՎՐՈՊԱ ՓՏԱԽՏ

Մեղվի թրթուրների վարակիչ փտախտ հիվանդություններից ամերիկյան փտախտը խիստ անտագոնիզմի մեջ է մյուս հիվանդությունների հետ. օրինակ՝ ամերիկյան փտախտով վարակված թրթուրի մեջ ոչ մի ուրիշ բացիլ մուտք գործել չի կարող, բայց միևնույն ընտանիքում կամ միևնույն մեղրահացի վրա, տարբեր բջիջներում եղած թրթուրներից կարող են տարբեր ժամանակում

վարակվել և հիվանդանալ այս կամ այն հիվանդությամբ, բայց միևնույն թրթուրը (որդը) մի քանի տեսակ հիվանդությամբ վարակվել չի կարող։

ՈՐԴԻ ԵՎ ԹՐԹՈՒՐԻ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի վերևում նշված հիվանդություններից, որոնք ոչնչացնում են մեղվի թրթուրներին կամ հարսնյակներին, շատ հաճախ պատահում են նաև մրսած որդեր կամ հարսնյակներ, որը առաջ է գալիս հետևյալ պատճառներից. օրինակ՝

Գարնան ընթացքում մեղվի ընտանիքները բարենպաստ եղանակների և բերքի շնորհիվ շատ ուժեղ տեմպով սկսում են բազմանալ, կծիկն սկսվում է բացվել և մայրը սկսում է լայնացնել իր ձվադրման տահմանը, ընտանիքում լինում են մեծ քանակությամբ ձվեր, թրթուրներ, հարսնյակներ (որդ ու ձու), հանկարծ սկսում են հետադարձ ուժեղ ցրտեր, մեղուներն անմիջապես սկսում են կծիկ կազմել և կծիկից դուրս մնացող ձվերը, թրթուրները (որդերը) և հարսնյակները ցրտից սառչում և մեռնում են. ալսպիսիները լինում են մեղրահացերի ցածի մասում, կամ կողքերին։ Մեռած թրթուրներն (որդերն) սկսում են գույնը փոխել և հոտել. մեղուները դրանց մաքրում են, ընտանիքում եղած մյուս թրթուրները (որդերը) դանվում են առողջ վիճակում։ Ալսպիսի դեպքեր լինում են համեմատաբար թույլ ընտանիքներում։

Շատ հաճախ թրթուրները մեռնում են նաև վատ որակի, թրջված կամ թանձրացած կերերից, որը նույնպես վարակիչ չի կարող լինել. մեղուները նրանց կմաքրեն և կաղատվեն դրանցից։

Հաճախ թրթուրները մեռնում են նաև կերի պակասությունից, երբ ընտանիքում բացակայում է գլխավորապես ծաղկափոշի։ Մեռած հարսնյակների սերկևները մեղուները ծակում են, շատ դեպքում իրենք հոտով նմանվում են ամերիկյան փտախտին, բայց մեռած թրթուրները չեն ծորում, կամ ձգվում, դրա համար էլ ուժեղ ընտանին որդ մաքրում է դրանց։

Գլխ. խմբագիր՝ Հ. ԹՈՐՄԱՆՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ
Կոնտր. սրբագրիչ՝ Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

ՎՖ 02899 Պատվեր № 492 Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 11/VI 1949 թ.
Ստորագրված է տպագրության 20/VII 1949 թ.
Տպագրական 2¾ մամուլ

Հայպետհրատարակչության № 2 տպարան, Երևան, Կալինինյանցի № 86, 1949 թ.

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԲՐԹՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄՆՅԱԿՆԵՐԻ (ՈՐԴԵՐԻ) ՓՏԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏԱՆԻՇԵՆԵՐԸ ՁԱՐԶԵԼՈՒ, ԱՏԴ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐԵԼԵՒ ՀԱՄԱՐ

	Ամերիկյան փտախտ	Եվրոպական փտախտ	Տոպրակաձև փտախտ
1. Փտախտի հարուցիչները (բացիլը)	Լարվելի բացիլ, սպոր կազմող, խիստ դիմացկուն սովորական պայմաններին	Գլյուտոնի բացիլ, սպոր չի կազմում, հեշտությամբ ոչնչանում է	Վիրուս, մանրադիտակով անտեսանելի, ոչ շատ դիմացկուն
2. Շերջանակների վրա բջիջների և թրթուրների (որդերի) տեսքը	Խիստ անկանոն գրված թրթուրներ (որդեր), բնական, գույնը կորցրած, ցամաք ընկած և ծակոտկեն սերեկներ	Անկանոն գրված թրթուրներ (որդեր) մեծ մասամբ և ընդհանրապես բաց բջիջներում	Նվազ անկանոն գրված թրթուրներ (որդեր), առհասարակ սերեկները բաց է, բայց փակ սերեկները ծակոտկեն են և այնքան ցածր չէ, որքան ամերիկյանը
3. Վարակված թրթուրի (որդի) բանակը	Եղած հարանչակների (փակ որդերի) մեծագույն մասը վարակվում է, երբ հիվանդությունը երկար ժամանակ մընում է փեթակում	Նվազ, բարմաթիվ վարակված թրթուրներ (որդեր) կարելի է նկատել բաց բջիջներում	Քիչ քանակությամբ վարակված թրթուրներ (որդեր) կարելի է նկատել
4. Վարակված թրթուրի (որդի) հասակը	Վարակվում է 4—5 օրվան հասակում և առհասարակ փչանում և մեռնում է սերեկվելուց հետո	Առհասարակ փչանում է նախքան բջիջի սերեկվելը 3—4 օրվան հասակում	Թրթուրը (որդը) փչանում է համարյա սերեկվելուց հետո
5. Վարակված թրթուրի (որդի) դիրքը բջիջում	Միշտ ընկած է բջիջի ցածր մասում երկարած դիրքի մեջ	Որոշ դիրք չունի, փտած թրթուրը (որդը) կարելի է նկատել բջիջի օրևէ մասում	Միշտ ընկած է կռնակի վրա բջիջի ցածր մասում
6. Վարակված թրթուրի (որդի) գույնը	Սև սրճագույն, նվազ փոփոխական	Դեղնագույն, գորշ կամ մուգ դեղնագույն, երբեմն սև, փոփոխական է	Գորշ դեղնագույն կամ սև գորշագույն գույնը միշտ սև է
7. Հոտը	Սուր հոտ, որը նմանում է հյուսնի հալած սոսնձի հոտին	Ինքնուրույն կամ որոշ հոտ չունի, երբեմն անախորժ թթու կամ ուռի քրտինքի հոտ	Զ ո ւ ն ի
8. Թրթուրի (որդի կազմվածքը	Մածուցիկ է, թելանման ձգվում է	Մածուցիկ չէ, որոշ չափով փխրուն, կարող է ձգվել փտած ռեզինի նման	Ոչ մի մածուցիկություն կամ առաձգականություն չունի։ Սովորաբար ջրալի և կարծես ավազախառն է
9. Վարակված թրթուրի (որդի) տեսակը	Ընդհանրապես աշխատավոր մեղվի թրթուրներ (որդեր) հազվագյուտ դեպքում բոռաորդեր կամ մայրաորդեր։	Երբեք տեսակի թրթուրներն (որդերն) էլ վարակվում են	Ընդհանրապես աշխատավոր մեղվի թրթուր (որդ) է, հազվագյուտ դեպքում բոռաորդ է, գուցե և վարակվեն մայրաորդեր
10. Շնչափողերը և մաշկը	Փչանալուց հետո, շնչափողերը պարզ չեն երևում։ Մաշկը թաթախված հալած է	Շնչափողերը պարզ երևում են, մաշկը որոշ չափով կարծր է մեռում	Շնչափողերը չեն երևում։ Մաշկը ամուր տոպրակի նման է մեռում
11. Թեփուկը	Սև սրճագույն, որոշ չափով փայլուն, շատ դժվար է բջիջից պոկել	Գորշ կամ սև սրճագույն, անհոտ է, հեշտությամբ կարելի է անջատել բջիջից	Մուգ կամ սև գույն, որոշ չափով անհարթ, շատ հեշտությամբ կարելի է պոկել բջիջից
12. Բջիջների մաքրումը մեղուների կողմից	Անկարելի է մաքրել	Շատ հեշտությամբ կարող են մաքրել, եթե մեղվապահը միջամտի	Շատ ավելի հեշտությամբ կարող են մաքրել
13. Տարածվելը	Ընդհանրապես դանդաղ, բայց հաստատ կերպով	Շատ արագ	Միջակ արագությամբ
14 Տարածման միջոցը	Ընդհանրապես վարակված մեղրից և վարակված նյութի հետ անխնամ վերաբերմունքից	Սերակրման միջոցով	Պարզ չէ, գուցե կերակրման միջոցով
15. Նկատվում է	Առհասարակ տարվա բոլոր եղանակներին, մասնավորապես ամռանը	Ընդհանրապես գարնան, հազվագյուտ դեպքում ամառը, երբեմն աշնանը	Ընդհանրապես գարնան, հաճախ ամռանը, երբեմն աշնանը
16. Վարակում է	Ե՛վ թույլ և ուժեղ ընտանիքներին	Վարակվում են ընդհանրապես ընտանիքներ, չի կարող վնասել ուժեղ ընտանիքներին, եթե ժամանակին միջոցներ ձեռք առնվի	Վարակում է առհասարակ թույլ ընտանիքներին, կարող է վարակել, բայց չի կարող լուրջ վնաս հասցնել ուժեղ ընտանիքներին
17. Հիվանդությունը վերացնելու համար	Անհրաժեշտ է անպայման կրկնակի թափ տալ մեղուները մաքուր փեթակի մեջ մոմաթերթերով մաքուր շրջանակների վրա	Անհրաժեշտ է անպայման թափ տալ մեղուները մաքուր փեթակի մեջ մոմաթերթերով մաքուր շրջանակի վրա	Մայրը փոխել, եթե ընտանիքը թույլ է, անհրաժեշտության դեպքում կերակրել և ուժեղացնել

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0007934

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.

ЦЕНА
№ 19295